67. ՀԱԹԵՐՔԻՆ ՀԻԼԻՆ

Ղարաբաղի Հաթերք շենումը հիլի տեսած չըն ինո̈ւմ։ Մին օր էտ շենն ա կյամ մին ղըլըցե։ Էտ Շուշի-Ղալա շըհա̈րա̈ն եկածը էքյսը քըշերավը իրեսը լվանալիս, մաղերը սանդրելիս, ջուբան մին հիլի յա տուս օնում, մեշին եշում։ Ետավ հունց ա ինո̈ւմ, էտ օրը ո̈ւրա̈ն կործերը էտ շենումը պըռծնելանը եար, էտ հըեռու շենին կործերը քննելանը եաը, էտ շուշի-ղըլըցե մարթը քըշերը կենում ա, վեր էքյսը եա տըեռնա, կյա Շուշի-Ղալան։

Էտ քըշեր լո̈ւվին ծըեռքան տըեղումը էնքան շըռտըշռըտի յա անում, էնքան պըըըն-պարան ա անում, յորղան-դոշակ ծըռըցընում, տափին եր քըցո̈ւմ, մին էլ ճոնդան ծիքյ տամ, էլհա քըցո̈ւմ յրան, վեր կաստո̈ւմեն պենջակը, վեր էն ար կոխկի տաբըրետկին տիրած, եր ա ընգնո̈ւմ, ծոցին հիլին էլ ընգնո̈ւմ թախտին տակը։

Էտ մարթը էքյսը եր ա կենում, շո̈րերը կյենում, պինջա̈կը յոր օնըմ, թափ տամ, կյենում, եա տըեռնում կյամ Շուշի-Ղալան, էն մին քըշերը համին էտ թախտին տնատարն ա քոն ինո̈ւմ։ Ըռուըթանա, վեր արևը տամ ա էտ թախտին քըշտի ակուշկավը, էտ տնատարն էլ օղում ա թա̈ եր կըենա, ըտրա աշկըն ա ընգնում թախտին տակին մին պըծըպածին ընելիս պեն։ Յոր ա օնըմ եշում, տեստեն շոռ տամ, ծընգըր-թիթև անում, ընգուճին տընում, էլհա մին լա̈վ եշում-տեսնում ո̈ւրա̈ն հորը պատկերըն ա...

Տու մի ասիլ, հիլի տըեսած չի, էտ վեր ո̈ւրա̈ն տեսնում ա,

ինքյըն էլ շատ նման ա ինո̈ւմ ուրա̈ն հորը, գյուղո̈ւմ ա թա̈ հորը պատկերն ա։

Յոր ա օնում պաչում, պըչպըչորում, թա̈.—Ա՛ հա̈ր, բա խե՞ մըեռեր, բա քյըեզ հո՞ւ ասից մըեռե, էշիտ հո՞ւ չու ասից, հո՞ւ ասից տեղտ ծոխ ա, եր էն զուլին նստե, վեր տու մըեռեր։

Իտի մին խրեգյ դըրդըհա̈ն ա ինում, ետնան էտ հիլին տինո̈ւմ դոշակին տակեն, կյեղում։ Իտի ամման ուռուլթանա հանում ա, պըչպըչորում էլհա կյեղում։

Մին օր էլ կընեգյը դույմիշ ա ինո̈ւմ, ասում ա. — էտ հի՞նչ ա, մին ինձ տո տեսնամ, վեր իտի պըչպըչորում ըս։ Մարթը տամ չի, էլհա կյեղում ա։

Վեր մարթը քյինում ա հա̈նդը, էտ կնեգյը դոշակին տակը պըտըռում ա, հիլին հանում, յեշում, տըեսնում մին կընգա պատկեր ա, չո̈ւնքի ուրա̈ն պատկերը հիլումը տըսնալավ, գյուղում ա, թա̈ մին օրիշ կընգա պատկեր ա.

Ասում ա. — Հա̈լբա̈թ տոն կըկյաս, ա մարթ, յըես քու դիվանըտ կանիմ, մհենգյ էլ սիրական ը՞ս պահում։

Էտ կնեգյը սաղ օրը տեղը-տեղ չի տամ, թա̈ նստե։

Ճուրո̈ւգյո̈ւնը մարթը նղացած հա̈նդա̈ն կյամ ա, կնեգյը յրա յա տամ, կըռեվ քցո̈ւմ, թա̈.— Մըգա̈մ տու սիրական օնի՞՞ս...

Մարթը ուրթո̈ւմն ա օտում, չըքըչոք անում, ասում.—Յըես խա̈բա̈ր չըմ իտի պենի, յըես սիրական չօնիմ...

Կնեգյը թա̈.— Չէ, վեր չէ սիրական օնիս հա̈լա̈ խոսում էլ ը՞մ՞, օղում ը՞ս հըստադիմ։

Էտ կնեգյը քյնում ա թախտին դո̈շա̈կին տական հիլին հանում, մարթին ըռաշկեն տինում։

Մարթն ասում ա. —

— Տնաքանդի կնե՛գյ, էս հու իմ հոր պատկերն ա, բեղավեր, մրքավեր։ Պա քու ըստինտ-ընդինտ, պա նհախ տեղան տոնը խե՞ կըռեվ ըս քցում։

Կընեգյը թա̈. — Չէ՛, վեր չէ՛, տա կընգա պատկեր ա, դե վեր էտքան ասում ը՞ս, ինձ տո մին էլ եշիմ։

Վեր մին էլ ա եշում, լափ հավան կլխին ա տամ, ըսկսում ա ճըղճըղալը, բըղբըղալը թա̈. — Քու սիրականետ պատկերն ա։

Սկսվում ա տուրուլթակը։

Վերչը քյնում ըն շենին տերտերին կոշտը, կանչում տոն, վեր կյա կործը քննե, տեսնա հո՞ւ վա դո̈ւզը, հո՞ւ վա սոտը։

Տերտերը լոխ ըսկանում ա, ասում. — Ա՛ վերթի՛, էտ զատը ինձ տո տեսնամ հուր պատկեր ա։

Հիլին յոր օնըմ, եշում, տեսնում մին մըրքավեր տերտերի պատկեր։

Նմնցընում ա Շուշի-Ղալին առաչնորթարանումը նստած վարթարեդեն, ասում. — Ա՛ վերթիքյ, քյընեցեքյ ծըեր տանը դինչ կացեքյ, սա հու մըեր վարթարեդին պատկերն ա։

Ըտեղ էտ տերտերը իրեսին խըշըկընքում ա, էտ պատկերան պաչում, տանում ժամումը տինում, ամման ուռութանա ժամ ասելիս եշում, իրեսին խըշըկընքում, դերացուն էլ առաչին խունդ ա ծըխում...